ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<09>> 10 2012թ. N: 141 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԿԱՌԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1792-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության>> 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի>> 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Կ.Աբրահամյանի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Կառլեն Աբրահամյանին 2012 թվականի հոկտեմբերի 5-ին գործուղել ք. Ջերմուկ՝ <<Գյուղական համայնքների 2-րդ համաժողով>>-ին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 2 օր՝ 2012 թվականի հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«09» 10 2012թ. N: 142 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՐԱՔՍՅԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետով և հիմք ընդունելով Արաքսյա Կիրակոսյանի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Արաքսյա Կիրակոսյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝